

## **ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ՎԱՐՉԱՊԵՏԻ, ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏՆԵՐԻ,  
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ  
ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՆՇԱՆԱԿՎԱԾ  
ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐԻ) ԵՎ ՆԱԽԱՐԱՐԻ  
ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ  
ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |           |
|--|-----------|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....   | 4         |
| <b>ԲԱԺԻՆ 1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.....</b>                         | <b>5</b>  |
| <b>ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....</b>   | <b>5</b>  |
| <b>ԳԼՈՒԽ 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ .....</b>  | <b>6</b>  |
| <b>ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԴՐՈՒՄ .....</b>  | <b>11</b> |
| <b>ԳԼՈՒԽ 4. ԳՈՒՅՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ .....</b>                        | <b>12</b> |
| <b>ԳԼՈՒԽ 5. ՄԱՍՆԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....</b>                            | <b>13</b> |
| <b>ԲԱԺԻՆ 2. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ .....</b>                    | <b>15</b> |
| <b>ԳԼՈՒԽ 1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՒՄ.....</b>               | <b>15</b> |
| <b>ԳԼՈՒԽ 2. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....</b>   | <b>15</b> |
| <b>ԳԼՈՒԽ 3. ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....</b>                            | <b>17</b> |
| <b>ԳԼՈՒԽ 4. ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....</b> | <b>25</b> |
| <b>ԳԼՈՒԽ 5. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԻ ԿԱԶՄՈՒՄ .....</b>       | <b>27</b> |

**ԲԱԺԻՆ 3. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓՄԱՆ  
ՓՈՒԼ.....29**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի մարտի 25-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվեցին ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքները (այսուհետ՝ նաև Օրենքներ), որոնցով սահմանվել են վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, ինչպես նաև վերջիններիս խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարի տեղակալների բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ կարգավորումները:

Օրենքների ընդունման արդյունքում ներդրվեցին բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, նրանց խորհրդականների, ինչպես նաև հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարների տեղակալների համար: Բարեվարքության ուսումնասիրության պարտադիր գործընթացի ներդրումը նպատակ էր հետապնդում նպաստել պետական համակարգի նկատմամբ վստահության և թափանցիկության բարձրացմանը: Միաժամանակ, բարեվարքության ուսումնասիրությունների հետևողականորեն իրականացման արդյունքում ակնկալվում է նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, ինչն ուղղակիորեն կբարձրացնի հանրային վստահությունը պետական պաշտոնատար անձանց նկատմամբ՝ ավելացնելով հանրային պաշտոններում նշանակվող անձանց հաշվետվողականությունը և հանրային վերահսկողության մակարդակը:

**ԲԱԺԻՆ 1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26.3-րդ հոդվածով նախատեսված բարեվարքության ուսումնասիրության գործընթացը իրականացվում է Օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով և պայմաններով՝ Օրենքի 26.3-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

2. Օրենքի 26.3-րդ հոդվածով նախատեսված բարեվարքության ուսումնասիրության առանձնահատկությունները արտացոլվում են սույն մեթոդական ուղեցույցի շրջանակներում:

3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից Օրենքի 26.3-րդ հոդվածով նախատեսված բարեվարքության ուսումնասիրության գործընթացը սկսվում է՝

1) վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, նրանց խորհրդականների, ինչպես նաև հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների կամ նախարարների տեղակալների պաշտոնը զբաղեցնող անձի (այսուհետ՝ նաև պաշտոնատար անձ) կողմից՝ պաշտոնական պարտականությունների ստանձնման հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ պաշտոնատար անձի հայտարարագիրը Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակվելու հաջորդող օրվանից,

2) պաշտոնատար անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագիր չներկայացնելու դեպքում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 35-րդ հոդվածով սահմանված տվյալներ ստանալու հաջորդ օրվանից,

3) «Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի կարգավորումների համաձայն պաշտոնեական պարտականությունները ստանձնելու հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից ազատված պաշտոնատար անձանց դեպքում՝ պաշտոնի նշանակելու (կամ վերանշանակելու) մասին «Հանրային ծառայության մասին» օրենքի 35-րդ հոդվածով սահմանված տվյալներ ստանալու հաջորդ օրվանից:

4. Սույն մեթոդական ուղեցույցի 3-րդ կետով նախատեսված հանգամանքների վերաբերյալ տվյալները ստանալուց հետո Հայտարարագրման վարչությունն այդ մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչությանը:

## **ԳԼՈՒԽ 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

5. Պաշտոնատար անձի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները վերհանելուց հետո պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից անհրաժեշտ տեղեկությունների ստացման նպատակով ուղարկվում են հարցումներ: Օրենքի 26.3-րդ հոդվածով նախատեսված բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության գործընթացն իրականացնելու նպատակով հարցումներն իրականացվում են պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու (կամ վերանշանակելու) մասին «Հանրային ծառայության մասին» օրենքի 35-րդ հոդվածով սահմանված տվյալների հիման վրա՝ պաշտոնատար անձի հայտարարագիր

ներկայացնելու պարտականություն կրելու ամբողջ ժամանակահատվածի վերաբերյալ՝ բացառությամբ սույն գլխի 9-րդ կետով նախատեսված դեպքերի:

6. Հարցումներն իրականացվում են Հանձնաժողովի Հայտարարագրման վարչության կողմից:

7. Հարցումներն իրականացնելուց առաջ Հայտարարագրման վարչությունը Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչությունից ստանում է սույն գլխի 8-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 12-րդ ենթակետերով նախատեսված կամ մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու համար անհրաժեշտ, սույն գլխով նախատեսված այլ հարցումները, որոնք ներկայացվում են Հայտարարագրման վարչության հարցումների հետ միասին:

8. Հանձնաժողովի կողմից ներքոնշված պետական կամ իրավասու այլ մարմիններից կատարվում են հարցումներ, որոնցում պարտադիր պահանջվում է նշված տեղեկատվությունը.

1) Պետական եկամուտների կոմիտե (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

ա. անձի՝ ստացված եկամուտների (ըստ տարիների, ըստ եկամտի տեսակի և աղբյուրի) մասին տեղեկատվություն,

բ. առևտրային կազմակերպությունների, իսկ ԱԶ հանդիսանալու դեպքում՝ ԱԶ-ի գործունեության (ինչպես նաև գործունեությունը դադարեցված լինելու դեպքում՝ դադարեցման հիմքերի և ժամկետների), իրացման շրջանառության վերաբերյալ տեղեկատվություն,

գ. անձի զբաղեցրած պաշտոնների և պաշտոնավարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն (ըստ անհրաժեշտության),

դ. անձի՝ Հարկային օրենսգրքի 156.1-ին հոդվածով նախատեսված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկով (հայտարարագրով) պարունակվող տեղեկատվություն:

2) ՀՀ կադաստրի կոմիտե (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ)։

ա. անձի անվամբ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման, անձի կողմից օտարված կամ ձեռք բերված անշարժ գույքի մասին տեղեկատվություն (այդ թվում՝ սեփականության իրավունքի գրանցման կամ դադարման հիմքերը)։

3) ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ)։

ա. անձի մասնակցությամբ գրանցված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մասին տեղեկատվություն (այդ թվում՝ լուծարված կամ գործունեությունը կասեցված կամ ժամանակավոր դադարեցված լինելու մասին),

բ. անձի կարգավիճակը գրանցված ընկերությունում և առկա բաժնեմասնակցության չափը,

գ. բաժնեմասն օտարելու վերաբերյալ գործարքների մասին տեղեկատվություն։

4) Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն (հարցումը կատարվում է պաշտոնատար անձի վերաբերյալ)։

ա. պաշտոնատար անձի՝ գրանցված ամուսնության վերաբերյալ տեղեկատվություն,

բ. պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ամուսին, անձի և ամուսնու ծնող, չափահաս կամ անչափահաս զավակ, քույր, եղբայր) վերաբերյալ տեղեկություններ։

5) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ)։

ա. անձի կողմից գույքի փաստացի տիրապետման, անձի հետ համատեղ բնակության, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող

գույքն անձի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելու կամ անձի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալու կամ այդ գույքը տնօրինելու վերաբերյալ տեղեկատվություն:

6) Հակակոռուպցիոն կոմիտե (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ)։

ա. անձի կողմից գույքի փաստացի տիրապետման, անձի հետ համատեղ բնակության, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքն անձի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելու կամ անձի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալու կամ այդ գույքը տնօրինելու վերաբերյալ տեղեկատվություն:

7) ՀՀ ՆԳՆ Ոստիկանություն (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ)։

ա. անձի կողմից տրանսպորտային միջոցի ձեռքբերման կամ օտարման, ինչպես նաև հարցման օրվա դրությամբ անձի անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն (այդ թվում՝ օտարման կամ ձեռքբերման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները)։

8) ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների համար)։

ա. անձին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում՝ ձեռքբերման/օտարման ամսաթիվ, գործարքի կողմ, արժեթղթերի ձեռքբերման արժեք, բաժնետոմսերի քանակ)։

9) Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապահովագրական ընկերություններ (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ)։

ա. պաշտոնատար անձի ապահովադիր կամ պայմանագրի շահառու հանդիսանալու պարագայում առկա ապահովագրական պայմանագրի մասին

տեղեկատվություն (այդ թվում՝ պայմանագրի առարկան, ապահովագրված օբյեկտի արժեքը, պայմանագրի գինը, պայմանագրի շահառուի տվյալները):

10) ՀՀ կենտրոնական բանկ (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ)։

ա. ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համատեղ որոշմանը համապատասխան բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

11) ԱԲՌԱ վարկային բյուրո (հարցումը կատարվում է թե՛ պաշտոնատար անձի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ)։

ա. ստացված վարկերի և դրանց մնացորդների վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն ձեռքբերված համաձայնության:

12) Պաշտոնատար անձին կամ վերջինիս գործատու հանդիսացող կազմակերպությանը։

ա. այլ վճարովի աշխատանքի իրականացման դեպքում՝ աշխատանքի բնույթը պարզելու նպատակով տեղեկատվություն (ըստ անհրաժեշտության):

9. Մասնավոր շահերի տեսանկյունից ռիսկերի վերհանման և գնահատման նպատակով սույն գլխի 8-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 12-րդ ենթակետերով նախատեսված հարցումները կարող են իրականացվել նաև սույն գլխի 5-րդ կետով նախատեսված ժամանակահատվածին նախորդած ժամանակահատվածի համար, եթե այդպիսի տեղեկությունները կարող են էական գործոն հանդիսանալ բարեվարքության ռիսկերի գնահատման տեսանկյունից:

10. Առաջնորդվելով Օրենքի 26.3-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումներով և ելնելով անձի՝ մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի ուսումնասիրության անհրաժեշտությունից՝ Հանձնաժողովը սույն գլխի 8-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 12-րդ ենթակետերով նախատեսված հարցումներն իրականացնում է նաև պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ:

11. Հարցումների արդյունքում համապատասխան տվյալները ստանալուց հետո Հայտարարագրման վարչության և Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից իրականացվում են համապատասխանաբար սույն բաժնի 4-րդ և 5-րդ գլուխներով նախատեսված գործողությունները:

### **ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԴՐՈՒՄ**

12. Հանձնաժողովի կողմից համադրվում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից ստացված և հայտարարագրերում (այդ թվում՝ նախկինում ներկայացված) ներկայացված տվյալները:

13. Համադրումը իրականացվում է հետևյալ սկզբունքներով.

- 1) տվյալների ամբողջականություն,
- 2) տվյալների արժանահավատություն:

14. Տվյալների ամբողջականության ուսումնասիրությունը հիմնականում ներառում է հայտարարագրված կոնկրետ տվյալի համեմատություն Հանձնաժողովին այլ աղբյուրներից հասանելի դարձած տվյալների հետ:

15. Տվյալների արժանահավատության ուսումնասիրությունը ենթադրում է առավել վերլուծական մոտեցում, տարբեր տվյալների համադրում, դրանց միջև կապերի բացահայտում և եզրահանգում առ այն, թե արդյոք պաշտոնատար անձի կողմից տրամադրած այս կամ այն տվյալը հավաստի է:

16. Հայտարարագրված և ստացված տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքում պատասխանատու ստորաբաժանումների կողմից կազմվում և Հանձնաժողովին է ներկայացվում պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության նախագիծը:

**ԳԼՈՒԽ 4. ԳՈՒՅՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ  
ՌԻՍԿԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

17. Գույքային դրության տեսանկյունից բարեվարքության ուսումնասիրությունը ներառում է պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու հայտարարագրի վերլուծություն՝ համադրված, առկայության դեպքում, պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված տարեկան հայտարարագրերի տվյալների հետ:

18. Եթե պաշտոնատար անձը «Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի կարգավորումների համաձայն ազատված է լինում պաշտոնական պարտականությունները ստանձնելու հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից, ապա բարեվարքության ուսումնասիրության համար հիմք է ընդունվում նրա կողմից վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված տարեկան կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը:

19. Պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու, իսկ սույն գլխի 18-րդ կետով նախատեսված դեպքում՝ վերջին անգամ ներկայացված հայտարարագրի տվյալները համադրվում են նաև պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ավելի վաղ ներկայացված հայտարարագրերի տվյալների հետ, եթե անհրաժեշտություն կա վերլուծելու այնպիսի տվյալներ, որոնց ուսումնասիրությունը պայմանավորում է ուսումնասիրության առարկա հայտարարագրում հայտարարագրած տվյալների ամբողջականության և արժանահավատության առնչությամբ վերջնական և հիմնավորված եզրակացության հանգեղը: Համադրումն իրականացվում է հայտարարատուի գույքային դրության փոփոխությունը գնահատելու, հայտարարագրված գույքի առաջնային ծագման

աղբյուրների հավաստիությունը պարզելու, ինչպես նաև նախորդ ժամանակահատվածում ստացված եկամուտների օրինականությունն ու դրանց համապատասխանությունը փաստացի ձեռքբերումներին ստուգելու նպատակով:

20. Ընդ որում, այն բոլոր դեպքերում, երբ պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամը ներկայացրել է ուսումնասիրվող հայտարարագրերի հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում, սակայն օրենքով սահմանված կարգով դեռևս չի կատարվել համապատասխան փոփոխությունը, ուսումնասիրության առարկա են հանդիսանում նաև պաշտոնատար անձի կողմից ներկայացված նշված դիմումները:

21. Բարեվարքության ուսումնասիրության ընթացքում հիմք են հանդիսանում նաև Հանձնաժողովի կողմից տվյալ անձի վերաբերյալ նախկինում իրականացված հայտարարագրերի ստուգման (այդ թվում՝ մշտադիտարկման շրջանակներում) կամ վերլուծության արդյունքները, Հանձնաժողովի գործառույթների շրջանակներում անձից ստացված պարզաբանումները, ինչպես նաև անձի վերաբերյալ ընդունված որոշումներն ու եզրակացությունները:

22. Հայտարարագրված տվյալները համադրվում են Գլուխ 2-ի 8-րդ կետի 1-11-րդ ենթակետերով նախատեսված հարցումների արդյունքում ձեռք բերված տվյալների հետ:

23. Ուսումնասիրության շրջանակներում էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ օգտագործվում են նաև ԶԼՄ հրապարակումները և բաց հասանելիության տվյալները:

## **ԳԼՈՒԽ 5. ՄԱՍՆԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

24. Մասնավոր շահերի տեսանկյունից բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը ներառում է պաշտոնատար անձի, ինչպես նաև ընտանիքի

անդամների պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրերի վերլուծություն՝ համադրված, առկայության դեպքում, նույն անձանց կողմից նախկինում ներկայացված հայտարարագրերի տվյալների հետ:

25. Եթե պաշտոնատար անձը ազատված է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգով պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրեր ներկայացնելու պարտականությունից, ապա Հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվում է նրա կողմից նախկինում ներկայացված հայտարարագրերի հիման վրա:

26. Հայտարարագրված տվյալները համադրվում են Գլուխ 2-ի 8-րդ կետով նախատեսված հարցումների արդյունքում ձեռք բերված տվյալների հետ:

27. Գնումների գործընթացին պաշտոնատար անձի, ինչպես նաև փոխկապակցված անձի կամ վերջիններիս մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնակցության վերաբերյալ տվյալների վերլուծության նպատակով ուսումնասիրվում են նաև հանրային գնումների տեղեկագրի ([gnumner.am](http://gnumner.am)), ինչպես նաև գնումների [www.armeps.am](http://www.armeps.am) համակարգի տվյալները, պաշտոնատար անձի աշխատավայրը հանդիսացող մարմնի (գնման պատվիրատուի) պաշտոնական կայքէջի՝ գնումների կազմակերպմանը վերաբերելի տվյալները:

28. Ուսումնասիրության շրջանակներում էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ օգտագործվում են նաև ԶԼՄ հրապարակումները և բաց հասանելիության տվյալները:

**ԲԱԺԻՆ 2. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ**

**ԳԼՈՒԽ 1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՒՄ**

29. Պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության նախագիծը բաղկացած է 3 բաժիններից (պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների գույքային դրության վերաբերյալ ամփոփ տեղեկություններ, պաշտոնատար անձի մասնավոր շահերի վերաբերյալ ամփոփ տեղեկություններ, պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մաս):

30. Յուրաքանչյուր բաժնում ներառվում են համապատասխան ելակետային և բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության ձևավորման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները:

**ԳԼՈՒԽ 2. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

31. Հանձնաժողովը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից ստացված տեղեկությունները համադրելով հայտարարագրերում ներկայացված տվյալների հետ, վեր է հանում առկա խնդիրներն ու անհամապատասխանությունները՝ դրանք դասակարգելով էական և ոչ էական հարցերի:

32. Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովն էական հարցերի առնչությամբ պարզաբանումներ կամ լրացուցիչ նյութեր (այդ թվում՝ բանկային

քաղվածքներ) ստանալու նպատակով կապ է հաստատում պաշտոնատար անձի հետ հայտարարագրում նշված հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստի հասցեով: Պաշտոնատար անձի հետ ունեցած հեռախոսազրույցը, վերջինիս նախապես տեղեկացնելուց հետո, ձայնագրվում է և պահպանվում հատուկ պանակում:

33. Արձանագրված ոչ էական անհամապատասխանությունների մասով պարզաբանումներ չեն հայցվում, դրանք չեն ներառվում կազմվող եզրակացության մեջ, իսկ ուսումնասիրության արդյունքների ամփոփումից հետո պաշտոնատար անձին (անհրաժեշտության դեպքում նաև ընտանիքի անդամներին) ներկայացվում է առաջարկ՝ հայտարարագրում արձանագրված անհամապատասխանություններն ուղղելու նպատակով Հանձնաժողով ներկայացնելու համապատասխան դիմում, իսկ մասնավոր շահերի տեսանկյունից արձանագրված ոչ էական անհամապատասխանությունների դեպքում՝ անհամապատասխանությունը վերացնելու վերաբերյալ: Ոչ էական են համարվում այն անհամապատասխանությունները, որոնք ունեն տեխնիկական բնույթ կամ վրիպակի արդյունք են կամ Հանձնաժողովի նախադեպային որոշումներով որակվել են որպես նվազ նշանակություն ունեցող կամ ազդեցություն չունեն հայտարարատուի և/կամ նրա ընտանիքի կազմի ընդհանուր գույքային դրության կամ մասնավոր շահերի վրա:

34. Ըստ հաջորդականության ներկայացվում են ուսումնասիրության ընթացքում առաջացած պարզաբանման ենթակա հարցերը, որոնց առնչությամբ պաշտոնատար անձն իր ցանկությամբ ներկայացնում է պարզաբանումներ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դրանք հիմնավորող փաստաթղթեր (այդ թվում՝ բանկային քաղվածքներ):

35. Պարզաբանումները ներառվում են պաշտոնատար անձի վերաբերյալ կազմված բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության նախագծում, դրանց արժանահավատությունը և հիմնավորվածությունը պաշտոնատար անձի գույքային դրությունը և մասնավոր

շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերը գնահատելու փուլում քննարկման առարկա դարձնելու նպատակով:

36. Եթե պաշտոնատար անձը սահմանված ժամկետում չի տրամադրում պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր, կամ դրանք բավարար չեն առկա կասկածները փարատելու համար, և ուսումնասիրության արդյունքում մնում են կասկածներ, որ հայտարարատու պաշտոնատար անձի կամ նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի էական փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) կամ ծախսը ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ, ապա Հանձնաժողովը, առաջնորդվելով Օրենքի 25-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջով, նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է Գլխավոր դատախազություն:

37. Այն դեպքում, երբ Հանձնաժողովը պաշտոնատար անձի կողմից համապատասխան հայտարարագրերում ներկայացված կապի բոլոր միջոցներն օգտագործելով (անհրաժեշտության դեպքում՝ նաև գրավոր), այդուհանդերձ, հնարավորություն չի ունենում արձանագրված խնդիրների և անհամապատասխանությունների առնչությամբ ստանալ պարզաբանումներ՝ վերջիններս ներառվում են բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության համապատասխան բաժիններում՝ արտացոլելով նաև արձանագրված խնդրի կամ անհամապատասխանության առնչությամբ Հանձնաժողովի դիրքորոշումը:

### **ՊԼՈՒԽ 3. ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

38. Պաշտոնատար անձի գույքային դրության տեսանկյունից հնարավոր ռիսկերի ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են եզրակացության՝ պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների գույքային դրության վերաբերյալ ամփոփ տեղեկությունների բաժնում՝ Հայտարարագրման վարչության կողմից:

39. Պաշտոնատար անձի օրենքով սահմանված հայտարարագրերը ներկայացված չլինելու հանգամանքը Հանձնաժողովի կողմից գնահատվում է որպես գույքային դրության և մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի առկայության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն տալու համար բավարար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշվածը պայմանավորված է եղել հայտարարագրման էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրներով, և պաշտոնատար անձը բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության ընթացքում ներկայացրել է հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը զրկված չի եղել վերջինիս գույքային դրության և մասնավոր շահերի վերաբերյալ վերլուծություն կատարելու հնարավորությունից:

40. Պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից հայտարարագիր չներկայացնելու հանգամանքը բարեվարքության տեսանկյունից ռիսկային գործոն չի գնահատվում այն դեպքերում, երբ՝

1) չներկայացնելը պայմանավորված է եղել հայտարարագրման էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրներով, և անձինք բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության ընթացքում ներկայացնում են հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը չի զրկվում պաշտոնատար անձի ընտանիքի ընդհանուր գույքային դրության ամբողջական վերլուծություն կատարելու հնարավորությունից.

2) չներկայացված հայտարարագրերի ժամանակահատվածում ընդհանուր գույքային դրության վրա ազդեցություն ունեցող գործարքներ չեն իրականացվել, ինչպես նաև հետագայում ներկայացված հայտարարագրերում առկա չեն եղել

այնպիսի գույքեր, որոնց առաջնային ծագման աղբյուրն անհրաժեշտ կլիներ գնահատել նախորդ հայտարարագրերի ուսումնասիրության միջոցով:

41. Հայտարարագրերում ներկայացված տվյալները համադրվում են հարցումների արդյունքում ներկայացված տվյալների հետ, վեր են հանվում և առանձին արձանագրվում են անհամապատասխանությունները:

42. Նույնաբովանդակ անհամապատասխանությունները (օրինակ՝ տարբեր տարիների հայտարարագրերում առկա է տարեվերջին և տարեսկզբին հայտարարագրված տվյալների միջև անհամապատասխանություն) համարվում են էական, արձանագրվում և գնահատման առարկա են դառնում այն դեպքում, երբ այդ մնացորդների տարբերության չափն էական ազդեցություն ունի տարեկան ընթացիկ ծախսի հաշվարկի և հայտարարատուի կամ նրա ընտանիքի անդամի ընդհանուր գույքային դրության համատեքստում:

43. Եթե դրամական միջոցների միջև առկա անհամապատասխանության արժեքը չի գերազանցում 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը նշված անհամապատասխանությունը չի արձանագրվում:

44. Հայտարարագրերում սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելը, որպես կանոն, չի դիտարկվում որպես պաշտոնատար անձի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոն, եթե նշված տվյալները լրացման կարգին չտիրապետելու հետևանք են և չեն հանգեցրել գույքային դրության իրական պատկերի փոփոխության կամ համանման փաստական հանգամանքներով Հանձնաժողովն իր նախորդիվ կայացված որոշումներով արարքը նվազ նշանակություն ունեցող է որակել:

45. Այն դեպքում, երբ հայտարարագրերում ներկայացված սխալ կամ ոչ ամբողջական տվյալները պաշտոնատար անձի պնդմամբ տեխնիկական վրիպակի կամ լրացման կարգին չտիրապետելու հետևանք են, բայց հաշվի առնելով դրանց քանակը կամ բնույթը՝ Հանձնաժողովին հնարավորություն չեն տալիս գույքային դրության վերաբերյալ ճշգրիտ հաշվարկներ կատարելու, Հանձնաժողովը նշված

հանգամանքը դիտարկում է որպես պաշտոնատար անձի գույքային դրության տեսանկյունից հնարավոր ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն կազմելու վրա ազդեցություն ունեցող ռիսկային գործոն: Որպես օրինակ, պաշտոնատար անձը կենցաղային ծախսերը հոգում է այլ անձանցից ստացված նվիրատվությունների հաշվին, սակայն նշված նվիրատվությունները երբևէ հայտարարագրերում չեն ներկայացվել որպես եկամուտ:

46. Այն բոլոր դեպքերում, երբ պաշտոնատար անձի և վերջինիս ընտանիքի անդամների գույքի առաջնային ծագման աղբյուրը հիմնավորող տվյալներ ներկայացված չեն կամ դրանք չեն հիմնավորվում հայտարարագրված և (կամ) պետական մարմիններից ստացված տվյալներով (օրինակ՝ անձը 2021 թվականին հայտարարագրել է առանձնատան ձեռքբերում, մինչդեռ նախորդ տարիներին հայտարարագրված դրամական միջոցներով և եկամուտներով նշված գույքի ձեռքբերումը չի հիմնավորվում), Հանձնաժողովը պաշտոնատար անձից պահանջում է ներկայացնել պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր:

47. Պաշտոնատար անձի և վերջինիս ամուսնու գույքային դրությունը բոլոր դեպքերում գնահատվում է որպես մեկ ամբողջություն, իսկ համատեղ բնակվող անձանց գույքային դրությունը՝ կախված դրանց ազդեցությունից և առնչությունից պաշտոնատար անձի գույքային դրության վրա:

48. Գույքի ծագման աղբյուրը գնահատելիս գնահատման առարկա են դառնում հետևյալ հանգամանքները.

1) եթե պաշտոնատար անձի կողմից չեն ներկայացվել գույքի ծագումը հիմնավորող փաստաթղթեր, կամ ներկայացված փաստաթղթերը Հանձնաժողովի մոտ ձևավորում են ողջամիտ կասկած առ այն, որ վերջիններիս գույքի ծագումը կամ փոփոխությունը օրինական և արժանահավատ չէ՝ Հանձնաժողովը նշված հանգամանքը կարող է գնահատել որպես գույքային դրության տեսանկյունից հնարավոր ռիսկերի առկայության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն տալու համար բավարար գործոն.

2) գույքի ծագման աղբյուրի գնահատման վրա համադրության մեջ ազդեցություն ունեցող ռիսկային գործոն կարող է դիտարկվել նաև պաշտոնատար անձի կամ վերջինիս ընտանիքի անդամների կողմից վերաբերելի ժամանակահատվածում հանրային և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու հանգամանքը, եթե պետական մարմիններից ստացված տվյալներով նշված գույքի ծագումը չէր կարող հիմնավորվել անձի օրինական եկամուտներով.

3) այն դեպքում, երբ գույքը սեփականության իրավունքով պատկանում է պաշտոնատար անձի ընտանիքի անդամներին, և պաշտոնատար անձը գույքային իրավունք չունի նշված գույքի նկատմամբ, Հանձնաժողովը նշված հանգամանքը դիտարկում է պաշտոնատար անձի ընտանիքի ընդհանուր գույքային դրության արժանահավատության ռիսկի տեսանկյունից.

4) այն դեպքում, երբ որպես գույքի ծագման աղբյուր նշվում է նվիրատվությունը, պարզելու համար պաշտոնատար անձի նշած անձի կողմից նվիրատվություն կատարելու հանգամանքի արժանահավատությունը գնահատման առարկա են դառնում նվիրատուի և նվիրառուի կապի բնույթը, դրամական միջոցների դեպքում՝ նվիրատվության եղանակը (կանխիկ, անկանխիկ), ինչպես նաև տվյալ գույքի առաջնային ծագման աղբյուրը և նվիրատուի ընդհանուր գույքային դրությունը.

5) այն բոլոր դեպքերում, երբ պաշտոնատար անձի կողմից ներկայացվում են նվիրատուի եկամուտները և նվիրատվության հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր, միաժամանակ, լրացուցիչ կասկածներ չեն առաջանում նվիրատուի և նվիրառուի կապի բնույթի, նվիրատուի եկամուտ-ծախս հարաբերակցության համատեքստում նվիրատվություն կատարելու հնարավորության տեսանկյունից, արձանագրվում է, որ ներկայացված տվյալները փարատել են գույքի ծագման աղբյուրի առնչությամբ առկա մտահոգությունները.

6) այն դեպքում, երբ պաշտոնատար անձի կողմից ներկայացվում են նվիրատուի եկամուտները հիմնավորող փաստաթղթեր, սակայն նվիրատվության հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր առկա չեն, կամ, որպես օրինակ,

դրամական միջոցները նվիրաբերվել են կանխիկ եղանակով, կախված գույքի չափից՝ Հանձնաժողովի կողմից նշված հանգամանքը կարող է դիտարկվել ինչպես ինքնուրույն գործոն, այնպես էլ այլ անհամապատասխանությունների հետ համադրությամբ.

7) այն դեպքում, երբ պաշտոնատար անձը նշում է նվիրատուի տվյալները, սակայն չի կարողանում ներկայացնել վերջինիս գույքային դրությունը հիմնավորող փաստաթղթեր, Հանձնաժողովն իրավասու է պետական մարմինների էլեկտրոնային շտեմարաններից լրացուցիչ հարցումներ կատարելու, բաց աղբյուրների ուսումնասիրության միջոցով ինքնուրույն ստուգելու անձի գույքային դրությունը և նվիրատվություն կատարելու հանգամանքի հնարավորությունը.

8) այն դեպքում, երբ որպես գույքի ծագման աղբյուր նշվում են խնայողությունները, Հանձնաժողովն իրավասու է Պետական եկամուտների կոմիտեի տվյալների շտեմարանից էլեկտրոնային հարցման միջոցով պարզելու վերաբերելի ժամանակահատվածում անձի օրինական եկամուտները: Եթե անձի կողմից հղում է կատարվում այնպիսի ժամանակահատվածի, որի տվյալները հասանելի չեն Պետական եկամուտների կոմիտեի տվյալների շտեմարանում, Հանձնաժողովը պաշտոնատար անձից պահանջում է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր: Եթե եկամուտները հիմնավորող փաստաթղթերը վաղեմությունից կամ այլ պայմաններից ելնելով հասանելի չեն, Հանձնաժողովը հնարավորություն է տալիս անձին ներկայացնել աշխատելու, իրականացրած գործունեության կամ այլ պասիվ եկամուտների փաստը հավաստող ցանկացած փաստաթուղթ և հնարավոր եկամտի չափը դիտարկում է միջինացված հաշվարկներով.

9) այն դեպքում, երբ որպես գույքի ծագման աղբյուր նշվում են գյուղատնտեսական եկամուտները, Հանձնաժողովն իրավասու է պաշտոնատար անձից պահանջել հավաստող փաստաթղթեր կամ կարող է օպերատիվ-հետախուզական և այլ մարմիններին հարցումներ կատարելու միջոցով ճշտել տվյալների արժանահավատությունը.

10) գույքի ծագման աղբյուրի առնչությամբ կասկածների առկայության պարագայում 5 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող կանխիկ դրամական միջոցների առկայությունը Հանձնաժողովը գնահատում է որպես ռիսկային:

49. Գույքային դրության համատեքստում պաշտոնատար անձի գույքային դրության տեսանկյունից հնարավոր ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն կազմելու վրա ազդեցություն ունեցող ռիսկային գործոններ են հանդիսանում նաև՝

1) գործարքների օրինականությունը կամ արժանահավատությունը: Մասնավորապես, եթե անձի կողմից կատարված գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներն էականորեն տարբերվում են շուկայական, կադաստրային արժեքներից, կամ առկա է գործարքի արժանահավատության առնչությամբ այլ կասկած (օրինակ՝ սնանկության գործընթացին նախորդող ժամանակահատվածում անձն իր խոշոր դրամական միջոցները փոխառության է հանձնում այլ անձի կամ անձի կամ վերջինիս հետ փոխկապակցված անձանց համայնքի ղեկավար լինելու ժամանակահատվածում անձը արտոնյալ պայմաններում համայնքից ձեռք է բերում անշարժ գույքեր), Հանձնաժողովը նշված հանգամանքները դիտարկում է որպես գույքային դրության տեսանկյունից հնարավոր ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն կազմելու վրա ազդեցություն ունեցող գործոն, եթե իրականացրած գործարքներն օրինական և արժանահավատ չեն: Գործարքի օրինականությունը ենթակա է գնահատման նաև հարկային պարտավորությունների պատշաճ կատարման համատեքստում.

2) հայտարարագրված եկամուտների և պետական մարմիններից ձեռքբերված տվյալների միջև անհամապատասխանություններ: Մասնավորապես, այն դեպքում, երբ պաշտոնատար անձը հայտարարագրում ներկայացնում է կոնկրետ գործունեությունից ստացված եկամուտ, որի վերաբերյալ տեղեկությունները չեն ստացվում մարմիններից, Հանձնաժողովն իրավասու է պաշտոնատար անձից

պահանջելու ներկայացնել համապատասխան պայմանագրերը կամ այլ հիմնավորող փաստաթղթեր: Որպես օրինակ, անձը հայտարարագրել է կրթական գործունեության արդյունքում ստացված եկամուտ, սակայն տվյալը չի հաստատվել ՊԵԿ-ից ձեռքբերված տեղեկություններով, կամ ներկայացված է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտ (հասույթ), մինչդեռ բաշխված շահաբաժինների վերաբերյալ տվյալներ չեն ստացվել: Տվյալ դեպքում, եթե ներկայացված փաստաթղթերով հաստատվում է նշված փաստը, և առկա չէ հարկային պարտավորություններից խուսափելու կասկած՝ Հանձնաժողովը նշված հանգամանքը չի դիտարկում որպես գույքային դրության տեսանկյունից հնարավոր ռիսկերի առկայության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն կազմելու վրա ազդեցություն ունեցող գործոն:

ա. Այն դեպքում, երբ անձի կողմից ներկայացված եկամուտը վերջինիս պնդմամբ ձևավորվել է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում, մինչդեռ նշված եկամուտները ողջամտորեն չեն հիմնավորվում Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալներով (օրինակ՝ անձը ներկայացրել է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված պայմանական եկամուտ, սակայն վերջինիս նշած կազմակերպության վերաբերելի ժամանակահատվածի իրացման շրջանառությունը էականորեն պակաս է եղել հայտարարագրված եկամտից), Հանձնաժողովը տվյալ դեպքում ուսումնասիրության առարկա է դարձնում պայմանագրերի պայմանները և յուրաքանչյուր դեպք գնահատում է օրենսդրական և պայմանագրային առանձնահատկություններից ելնելով.

3) բանկային հաշիվների համախառն մուտքերի-ելքերի և ստացված եկամուտների միջև էական տարբերության արդյունքում հայտնաբերված խնդիրները.

ա. Այն դեպքում, երբ բանկային հաշիվների համախառն մուտքերը և ելքերը մինչև երեք անգամ գերազանցում են անձի ստացած եկամուտները, Հանձնաժողովը նշված հանգամանքը չի դիտարկում որպես եզրակացություն կազմելու վրա

ազդեցություն ունեցող ռիսկային գործոն՝ հաշվի առնելով բանկային հաշիվների միջև փոխանցումների հավանականությունը: Նշված սահմանաչափը գերազանցող շրջանառության դեպքում Հանձնաժողովն իրավասու է անձից պահանջել ներկայացնելու բանկային հաշիվների քաղվածք: Եթե անձը քաղվածքը չի ներկայացնում կամ քաղվածքի ներկայացման պայմաններում ևս չեն փարատվում բանկային հաշիվների գործարքների առնչությամբ առկա մտահոգությունները՝ Հանձնաժողովը նշված հանգամանքը դիտարկում է որպես պաշտոնատար անձի գույքային դրության տեսանկյունից հնարավոր ռիսկերի առկայության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն կազմելու վրա ազդեցություն ունեցող ռիսկային գործոն:

բ. Այն դեպքում, երբ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանություններն առանձին-առանձին եզրակացություն կազմելու վրա ազդեցություն ունեցող ռիսկային գործոն չեն գնահատվել, սակայն իրենց համակցության մեջ ձևավորել են պաշտոնատար անձի և վերջինիս ընտանիքի անդամների ընդհանուր գույքային դրության արժանահավատության առնչությամբ ռիսկ, Հանձնաժողովը նշված հանգամանքը դիտարկում է որպես պաշտոնատար անձի բարեվարքության եզրակացություն կազմելու վրա ազդեցություն ունեցող ռիսկային գործոն:

#### **ԳԼՈՒԽ 4. ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆԶԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

50. Պաշտոնատար անձի մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի մասին տեղեկությունները ներկայացվում են եզրակացության՝ պաշտոնատար անձի մասնավոր շահերի վերաբերյալ ամփոփ տեղեկությունների բաժնում՝ Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից:

51. Մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի առկայության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն կազմելու համար բավարար գործոն են հանդիսանում՝

1) պաշտոնատար անձի կողմից առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցություն ունենալը (բացառությամբ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 10-րդ և 11-րդ կետերի), այն դեպքում, երբ կանոնադրական կապիտալում վերջինիս բաժնեմասը հանձնված չէ հավատարմագրային կառավարման,

2) բաժնեմասի՝ հավատարմագրային կառավարման հանձնված չլինելը պաշտոնատար անձի բարեվարքության գնահատման նկատմամբ ազդեցություն ունեցող ռիսկային գործոն չի դիտարկվում միայն այն դեպքում, երբ առևտրային կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է, կամ գտնվում է լուծարման փուլում, կամ առկա են բավարար փաստական տվյալներ, որոնք վկայում են, որ կազմակերպությունն անձի պաշտոնավարման ընթացքում չի ունեցել իրացման շրջանառություն, ինչպես նաև պաշտոնատար անձը չի ստացել բաժնեմասնակցության դիմաց եկամուտներ,

3) պաշտոնատար անձի կողմից առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցություն ունենալը (բացառությամբ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 10-րդ և 11-րդ կետերի), այն դեպքում, երբ կանոնադրական կապիտալում վերջինիս բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, կամ երբ պահպանված չեն նույն օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ, 11.1-ին, 11.2-րդ մասերով հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները,

4) պաշտոնատար անձի կողմից առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների

իրականացմանը ներգրավված լինելը (բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերի) կամ առևտրային կազմակերպությունում որևէ պաշտոն զբաղեցնելը,

5) անհատ ձեռնարկատեր հանդիսանալը,

6) պաշտոնատար անձի կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելը,

7) պաշտոնատար անձի կողմից այլ վճարովի աշխատանք կատարելը (այլ վճարովի աշխատանքի դիմաց վարձատրություն ստանալը), եթե այդ աշխատանքը չի հանդիսանում օրենքի իմաստով գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանք:

Գիտական և կրթական աշխատանքի իրականացումը մասնավոր շահերի տեսանկյունից ռիսկային կարող է համարվել բացառապես այն դեպքում, երբ իրականացվող աշխատանքը (դրա շրջանակը) առնչվում է անձի՝ ի պաշտոնե իրականացվող լիազորությունների հետ,

8) պաշտոնատար անձի կամ վերջիններիս ընտանիքի անդամի մասնակցությամբ կամ ներկայացվածությամբ առևտրային կազմակերպությունների, կամ անհատ ձեռնարկատեր հանդիսանալու դեպքում՝ ԱԶ-ի՝ պետական (կամ համայնքային) գնումների գործընթացներին մասնակցությունը կամ այն հանգամանքը, թե արդյոք կազմակերպության կամ ԱԶ-ի գործունեության ոլորտը նույնանում է պաշտոնատար անձի գործունեության ոլորտի հետ,

9) պաշտոնատար անձի կողմից ուսումնասիրության ենթակա հանրային պաշտոնում պաշտոնավարմանը նախորդած շրջանում զբաղվածության կամ գործունեության ոլորտի անմիջական կապը հանրային պաշտոնում վերջինիս գործունեության ոլորտի կամ վերջինիս համակարգման ներքո գտնվող ոլորտի հետ:

## **ԳԼՈՒԽ 5. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ**

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԻ ԿԱԶՄՈՒՄ**

52. Պաշտոնատար անձի գույքային դրության և մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերը և դրանց չեզոքացմանն ուղղված առաջարկությունները ներկայացվում են բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության վերջին՝ եզրափակիչ մասում:

53. Բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մասը բաղկացած է երկու հատվածից՝ պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ հատված և մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի վերաբերյալ հատված:

54. Բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության նախագծի եզրափակիչ մասի պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ հատվածը կազմվում է Հանձնաժողովի Հայտարարագրման վարչության, իսկ մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի վերաբերյալ հատվածը՝ Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից:

55. Պաշտոնատար անձի գույքային դրության և մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի առկայությունը գնահատվում է վերջինիս կողմից հայտարարագրերում ներկայացված և հարցումների արդյունքում ձեռք բերված բոլոր տեղեկությունների ու տվյալների համադրման արդյունքում:

56. Բոլոր այն դեպքերում, երբ համադրումը հնարավոր չէ, այսինքն՝ փաստի վերաբերյալ տեղեկությունը չի հաստատվել պաշտոնական աղբյուրից ստացված տեղեկություններով, ապա այդ տեղեկությունը ենթակա է լրացուցիչ ստուգման և գնահատման:

57. Այն դեպքում, երբ պաշտոնատար անձի (սույն մեթոդական ուղեցույցով սահմանված դեպքերում նաև վերջինիս ընտանիքի անդամների կամ փոխկապակցված անձանց) վերաբերյալ մամուլի հրապարակումներով, կամ Հանձնաժողով մուտքագրված դիմումներով ներկայացված տվյալների ստուգման

արդյունքում դրանք այլ աղբյուրների հետ համադրմամբ չեն հաստատվում, Հանձնաժողովը դրանք չի դիտարկում որպես բարեվարքության ռիսկերի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրահանգումների վրա ազդեցություն ունեցող գործոն:

### **ԲԱԺԻՆ 3. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՓՈՒԼ**

58. Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչությունը կազմում և Հայտարարագրման վարչություն է ներկայացնում պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության նախագծի՝ իր պատասխանատվության տակ գտնվող համապատասխան հատվածները:

59. Պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության նախագծի ամփոփման և Հանձնաժողովին ներկայացնելու համար պատասխանատու է Հայտարարագրման վարչությունը:

60. Հանձնաժողովը, պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության նախագիծը Հայտարարագրման վարչությունից ստանալուց հետո, գնահատելով պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների հայտարարագրերի վերլուծության, համադրման և ամփոփման արդյունքում կազմում և Օրենքի 26.3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված համապատասխան անձին է ներկայացնում պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

61. Գույքային դրության և մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի առկայության դեպքում Հանձնաժողովը եզրափակիչ մասում հստակ նշում է դրանց չեզոքացմանն ուղղված իր առաջարկությունները:

62. Հանձնաժողովի անդամները պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության նախագծի վերաբերյալ

հայտնում են իրենց դիրքորոշումը՝ պաշտոնատար անձի գույքային դրության և մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերի առկայության կամ բացակայության վերաբերյալ, իսկ ռիսկերի առկայության դեպքում՝ նաև դրանց չեզոքացմանն ուղղված նախագծով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ:

63. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի անդամների դիրքորոշումները չեն համընկնում, և չի ապահովվում Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությամբ նշվում են Հանձնաժողովի անդամների հիմնավորումները, իսկ ռիսկերի առկայության վերաբերյալ դիրքորոշման առկայության դեպքում՝ նաև դրանց չեզոքացմանն ուղղված համապատասխան առաջարկությունները:

64. Այն դեպքում, երբ ապահովվում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, սակայն Հանձնաժողովի անդամներից որևէ մեկի դիրքորոշումը չի համընկնում Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեծամասնության դիրքորոշմանը, պաշտոնատար անձի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությամբ նշվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեծամասնության դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում ունեցող անդամի հիմնավորումները, իսկ ռիսկերի առկայության դեպքում՝ նաև դրանց չեզոքացմանն ուղղված համապատասխան առաջարկությունները:

65. Եթե Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում բացահայտվում են առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա նշված տեղեկությունները հանցագործության մասին հաղորդման շրջանակներում ներկայացվում են Գլխավոր դատախազություն:

66. Վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, նրանց խորհրդականների, ինչպես նաև հասարակական հիմունքներով նշանակված

խորհրդականների և նախարարների տեղակալների բարեվարքության ոլիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունները ենթակա չեն հրապարակման: